ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

«ԱԽՈՒՐՅԱՆ - ԱՐԱՔՍ - ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ
ВОДНОГО ХОЗЯЙСТВА
ПРИ МИНИСТЕРСТВЕ
СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
" АХУРЯН – АРАКС-ДЖРАР"

377760, ք.Արմավիր, փ.Երևանյան 30
Հեռախոս / ֆաքս /0237/ 2 – 77 – 27
Էլ. հասցե AXURYAN-ARAQS-JRAR11@mail.ru

377760, г.Армавир, ул.Ереванян 30
Телефон / факс: /0237/ 2 – 77 – 27

Թիվ 34-15
«29» 05 2015թ.

*Հաստատված է*

*«ՀՀԳՆՋՏՊԿ-ԱԱջ-ՇՀԱՊՁԲ-15/6-15/12 » ծածկագրով*

*շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի*

*2015 թ. << մայիս >> <<29>>-ի թիվ <<1>>որոշմամբ*

*<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ*

## *Հ Ր Ա Վ Ե Ր*

### <<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ <<ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ-ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ <<Ավտոպահեստամասերի>> ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀԳՆՋՏՊԿ-ԱԱջ-ՇՀԱՊՁԲ-15/6-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Արմավիր Երևանյան 30 (պատվիրատուի հասցեն) հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու օրվան հաջորդող <<7>> -րդ աշխատանքային օրվա ժամը << $12^{00}$ >>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ <<7>>-րդ օրվա ժամը <<$12^{00}$>>-ը: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար (կամ---- ՀՀ դրամը վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը դիմումի հետ միասին ներկայացնելու դեպքում) այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<՝ axuryan-araqs-jrar11@mail.ru>>, հեռախոսահամարն է՝ _(094-04-07-80)_:

*Տնօրեն* *Է. Սարգսյան*